ՔԱՂՎԱԾՔՆԵՐ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1959 Թ. ՄԱՐՏԻ 24-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ սույն նիստում քննության առնվեց Վեհափառ Հայրապետի կողմից ներկայացված Աստվածաշնչի աշխարհաբար (արևելահայերեն) թարգմանության նախապատրաստական աշխատանքներն սկսելու առաջարկը։

1956 թվականի մարտ ամսում Կահիրեում գումարված Եպիսկոպոսական ժողովի որոշմամբ, 1965 թվականին նշվելու է Աստվածաշնչի հայերեն առաջին տպագրության 300-ամյակը և այդ առթիվ հրատարակվելու է Աստվածաշնչի աշխարհաբար (արևմտահայերեն և արևելահայերեն) պաշտոնական թարգմանությունը։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը այս առթիվ որոշում ընդունեց հանձնարարել Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ պրոֆ.-դոկտ. Արարատ Ղարիբյանին՝ կազմել և Գերագույն Հոգևոր Խորհրդին ներկայացնել Աստվածաշնչի արևելահայերեն լեզվով թարգմանության կենտրոնական հանձնաժողով հրավիրելու նախագիծը։

1959 Թ. ԱՊՐԻԼԻ 8-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ իր այսօրվա նիստում գոհունակությամբ լսեց Վեհափառ Հայրապետի հաղորդումը Մայր Աթոռի Ավագ Սեղանի տակ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտի կողմից կատարված հնագիտական պեղումների արդյունքների մասին։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը այս առթիվ որոշեց կազմել պաշտոնական հաղորդագրություն պեղումների արդյունքների մասին և Մայր Աթոռի դիվանի կողմից ուղարկել բոլոր թեմերին։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ իր սույն նիստում որոշեց ապրիլ ամսի 11—13-ին Մայր Աթոռում հրավիրել ներքին թեմերի ներկայացուցչական համագումար՝ քննարկելու համար Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու Սահմանադրության նախագիծը։

1959 Թ. ԱՊՐԻԼԻ 17-Ի ՆԻՍՏԻՑ

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ իր սույն նիստում կարևորությամբ քննության առավ Բրազիլիայի հայոց Կաթողիկոսական պատվիրակի փոխանորդ արժանապատիվ Տ. Եղնիկ ավագ քահանա Վարդանյանի զեկուցագիրը Սան-Պաուլոյի հայ գաղութում

մերձավոր ամուսնությունների մասին, երբ երկու քույրեր կամ քույր ու եղբայր կամենում են իրենց զավակներին ամուսնացնել միմյանց հետ։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, նման ամուսնությունները համարելով հակաօրինական և ոչ ընդունելի, հրահանգեց արժանապատիվ Տ. Եզնիկ ավագ քահանա Վարդանյանին՝ խստությամբ պահպանել ամուսնության վերաբերյալ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ողջամիտ կանոններն ու ավանդությունները և հայրական հորդորներով առաջն առնել նման ոչ բնական երևույթների։

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴԸ սույն նիստում քննության առավ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանի (Գալամդարյանի), Շիրակի թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանի, Ադրբեջանի թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանի եկեղեցական, վարչական և հոգևոր թեմական գործունեությունը։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը իր գոհունակությունը արձանագրելով Արարատյան, Շիրակի և Ադրբեջանի թեմերի առաջնորդական փոխանորդների գոհացուցիչ գործունեության համար և նկատի առնելով այն հանգամանքը, որ առաջնորդական փոխանորդները արդեն իսկ ձեռք են բերել իրենց թեմերի եկեղեցական հոգևոր կյանքի կազմակերպման և ղեկավարման գործում բավարար փորձառություն և փաստորեն կատարում են թեմական առաջնորդի պարտականությունները, և հենվելով թեմական խորհուրդների միջնորդության և հավատացյալների ցանկության վրա, որոշեց խնդրել Վեհափառ Հայրապետին՝ հայրապետական կոնդակով հաստատել հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանի և հոգեշնորհ Տ. Տիրայր վարդապետ Մարտիկյանի ընտրությունը որպես թեմական առաջնորդների, իսկ հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Տերյանին, առաջնորդական իրավասություններով, վերահաստատել որպես առաջնորդական փոխանորդի, որովհետև Արարատյան թեմը հայրապետական թեմ է հանդիսանում։